

Աղջկա մեր լաց ըլի,
 Բա չի՞ էլ լաց ըլի:
 Ա՛խ, տանում ենք, տանում ենք,
 Հորանց գյուղից հանում ենք:
 Հարս ջան, դու լավ հարս կըլնես,
 Սեծավորին կըհորգես:
 Ա՛խ, տանում ենք, տանում ենք,
 Երամիցը հանում ենք:

328. Հարսանիքը եկավ վերին կալերով,
 Հարսին շորեր քերին ոսկե ծողերով,
 Դե հագի, դե կապի, եկել ենք, աանենք,
 Փես հագնի, չես կապի, զոռով կաանենք:
 Պապայիդ խաբեցինք մի քաժակ գինով,
 Սամայիդ խաբեցինք քիշմիր շալերով,
 Դե հագի, դե կապի, եկել ենք, տանենք,
 Փես հագնի, չես կապի, զոռով կտանենք:
 Եղբորդ խաբեցինք մի շիշ կոնյակով,
 Զեպ էլ խաբեցինք պիրուն տղայով,
 Դե հագի, դե կապի, եկել ենք տանենք,
 Փես հագնի, չես կապի, զոռով կտանենք:

329. Օ՛ֆ, աման, ադե ջան, տանում են,
 Զուրն ախպորիցը հանում են,
 Թող աանեն, ադե ջան, թող աանեն,
 Զիրն ախպորիցը թող եանեն:
 Օ՛ֆ, աման, ադե ջան, տանում են,
 Աղջիկն մորիցն հանում են,
 Թող աանեն, ադե ջան, թող աանեն,
 Աղջիկն մորից թող հանեն:
 Օ՛ֆ, աման, ադե ջան, տանում են,
 Ոնջիլագից հանում են,
 Թող աանեն, ադե ջան, թող տանեն,
 Ոնջիլագից թող հանեն:

330. Թագվորի մեր, դիմացի,
 Դիմացի, վայ, դիմացի,
 Գլխիդ տվող ենք քերել,
 Ծերեփդ խլող ենք քերել,
 Բալնիքդ առնող ենք քերել,
 Տեղդ գրավող ենք քերել,
 Դե դիմացի, դիմացի,
 Զան արի, դիմացի:

331. Հարսանիքդ քարի, շնորհավոր լինի, շնորհավոր լինի,
 Բուրդ նառածներին տչքը լույս լինի, աչքը լույս լինի,
 Լցրեք քաժակները արաղ ու գինի,
 Լցրեք քաժակները արաղ ու գինի,
 Խմենք քարեկամներ, մեզ անուշ լինի,
 Խմենք քարեկամներ, մեզ անուշ լինի:
 Իգիթը՝ եղբայրը ջոկել է լավը,
 Իգիթը՝ եղբայրը ջոկել է լավը,
 Թող քարով վայելի իր ջոկած հարսը,
 Թող քարով վայելի իր ջոկած հարսը:
 Գինով է լցված քավորի թասը, քավորի թասը,
 Թափն է արժանի մեր թապա հարսը, մեր թապա հարսը,
 Լցնենք քաժակները արաղ ու գինի,
 Լցնենք քաժակները արաղ ու գինի,
 Խմենք քարեկամներ, մեզ անուշ լինի,
 Խմենք քարեկամներ, մեզ անուշ լինի:

ԼՈՌՈՒՆ ՆՎԻՐՎԱԾ ԵՐԳԵՐ

332. Լալվար սարի հայն էր աղի, ջուրն էր լեղի,
 Յարս կորավ անաեղի:
 Լալվար սարը կառ ընգավ,
 Լալվար քարը վար ընգավ,
 Լալվարիցը գրածը
 Փի լավացնի տվածը:
 Սարից անցա, գնացի,
 Զուրն ընգա, մնացի,
 Սարիցն էկան դշերը,
 Սաքար պերին գշերը:
 Լալվար սարը քարչոն ա,
 Միրած յարս քաղցրն ա,
 Ա՛խ, իմ սիրածն ինչ կանեմ,
 Լալվար սարեն վարդ տանեմ:

333. Զոռաքարի չիմ չուերը ծաղկել ա,
 Յարս հանդից հեսա նոր աուն եկել ա,
 Ման գյամ, ման գյամ Սև սանափյուր վարումը,
 Մեկ էլ ման գյամ Զոռաքարի սարումը:

Հորս չին նսաել եմ, որ ինչ տուն աանի,
 Ես աղջիկ եմ, ինչ հավան ա իմ նապին,
 Մտն առամ, ման գյամ Սև սանափյուր վարումը,
 Մեկ էլ ման գյամ Զոռաքարի սարումը:

Գնամ, տեսնես իմ նանը ինչ բանի է,
 Անջըք բարակ, անունը՝ Նապանի է,
 Բալքի միտքը ընկնեմ, գաղտու գալու ա,
 Ման գյամ, ման գյամ Սև սանափյուր վարումը,
 Մեկ էլ ման գյամ Բոշաքարի սարումը:

ՋԻՆՎՈՐԻ ԵՐԳԵՐ

334. Բույրիկ ջան, քույրիկ, էդ ո՞ւր ես գնում,
 Աման, աման, եղբայր ջան, Սև ծովն եմ գնում,
 Բույրիկ ջան, քույրիկ, Սև ծովում ի՞նչ կա,
 Աման, քեզ պատմեմ, եղբայր ջան, կարմիր վարդա կա,
 Բույրիկ ջան, քույրիկ, վարդո՞ղ կկորչի,
 Աման, աման, եղբայր ջան, լեզուդ պսպանցվի:

335. Կերչ քաղաքի գլխի լալեն,
 Թաղեմ շուն Հիսուքի բալեն,
 Մորս ու քրոջս թողեց լալեն,
 Խաբեք մորս, վիրավոր եմ:

Հենց որ մտա Կերչի հողը,
 Ջանըս ընկավ մահվան դողը,
 Ծեկ քյանքուս դրին հողը,
 Խաբեք մորս, վիրավոր եմ:

Մայրս, քույրս չեղքը ծոցին,
 Փոքր բալես օրորոցին,
 Միրած յարս կրակ բոցին,
 Խաբեք մորս, վիրավոր եմ:

Մեծ եղբայր ջան, մեռնում եմ ես,
 Ընտանիքս հանչնում եմ քեզ,
 Ընաանիքիս լավ կպահես,
 Ուղածները չխնայես:

336. Հոքոսառսին քոմին պապաս,
 Տարան լյրին Գյումրին ու Ղարս,
 Տներ թողին, աղջիկ ու հարս,
 Վերան դառնաս, Մամա խաթուն,
 Յարալու եմ, տարան Բաթում:

Հասան Ղալեն քաղ ու քոա,
 Գյուլեն մեջը կռֆոֆոա,
 Ձեռքիս յարեն կըմմոա,
 Վերան դառնաս, Հասան Ղալա,
 Ծառին թողիր, եթիմ բալա:

Դիրքը մտա վրես բայ էր,
 Խշաիկ պարկոդս անասոված էր,
 Վերան դառնաս, Մամա խաթուն,
 Յարալու եմ, տարան Բաթում:

ՈՐԲԻ ԵՐԳ

337. Ամերիկու ճամբեն երկար ու դուպ է,
 Ամերիկացին կայնած, մամա, որքերը կուպե,
 Տեղս քաղաք է, ծովի արանք է,
 Երթալ ու գալը, մամա ջան, կրակ է:

Մտա թունելը, չոքերս դողաց,
 Դուս գալու ժամանակ, մամա, աչքերս շողաց,
 Տեղս քաղաք է, ծովը արանք է,
 Երթալ ու գալը, մամա ջան, գուլում կրակ է:

ՀԱՅՐԵՆԱՄԻՐԱԿԱՆ ԵՐԳԵՐ

338. Երբ որ կործանվեց
 Հայոց մեծն Անին,
 Հայերը մնացին
 Օտարի չեղքին:

Արմենյան հող է,
 Երկիրը ծով է,
 Մասունը, Մուշ, Վան,
 Հայկական հող է:

Կորել է հովիվը,
 Փովել է հոռը,
 Թուրքիային է մնացել
 Հայոց մեր արոտը:

Արմենյան հող է,
 Երկիրը ծով է,
 Մասունը, Մուշ ու Վան
 Հայկական հող է:

Եղիր դու այնտեղ,
 Որտեղ մի հայ կա,
 Գուրգուրիք նրան,
 Որ Հայաստան գա: